

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2024 թվականի
հունիսի 4-ի N 1033 - Լ որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒԻ ԵՎ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԵՐՈՒՄ
2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 25-26-Ը ՏԵՂԱՑԱԾ ՀՈՐԴԱՌԱՏ ԱՆՁՐԵՎՆԵՐՈՎ
ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՈՎ ՏՈՒԺԱԾ
ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են սույն որոշման N 1 հավելվածով հաստատված միջոցառման շրջանակում սոցիալական աջակցության շահառու հանդիսացող ընտանիքներին միանվագ դրամական աջակցություն (այսուհետ՝ աջակցություն) տրամադրելու հետ կապված հարաբերությունները:

2. Աջակցությունը տրամադրում (նշանակում և վճարում) է ծառայությունը:

3. Աջակցությունը տրամադրելու համար շահառու ընտանիքի անդամներից մեկը, մինչև 2024 թվականի օգոստոսի 31-ը ներառյալ, ծառայություն է ներկայացնում (այդ թվում նաև՝ e-request.am էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի միջոցով) դիմում՝ համաձայն N 2 ձևի:

4. Զոհված անձանց ընտանիքի անդամը, սույն կարգի 3-րդ կետով նախատեսված դիմումից բացի, ներկայացնում է նաև՝

1) զոհվածի մահվան վկայականի կամ մահվան ակտի գրանցման վերաբերյալ տեղեկանքի լուսապատճենը.

2) ամուսնության վկայականի կամ ամուսնության ակտի գրանցման վերաբերյալ տեղեկանքի լուսապատճենը՝ զոհվածի ամուսնու դիմելու դեպքում.

3) զոհվածի ծննդյան վկայականի կամ ծննդյան ակտի գրանցման վերաբերյալ տեղեկանքի լուսապատճենը՝ զոհվածի ծնողի կամ օրինական ներկայացուցչի դիմելու դեպքում.

4) զավակի ծննդյան վկայականի կամ ծննդյան ակտի գրանցման վերաբերյալ տեղեկանքի և առկայության դեպքում՝ զավակի ծնողների ամուսնության վկայականի

(կամ հայրության ճանաչման վկայականի) լուսապատճենը՝ զոհվածի զավակի դիմելու դեպքում:

5. Ծառայությունը սույն կարգի 3-րդ և 4-րդ կետերով ստացված տվյալները համեմատում է (համադրում է) բնակչության պետական ռեգիստրի, քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններից ստացված՝ մահվան ակտերի գրանցման և Հայաստանի Հանրապետության Լոռու և Տավուշի մարզպետների աշխատակազմերից ստացված տվյալների հետ և մերժում կամ հաստատում է դիմումը:

6. Դիմումը մերժվում է՝

1) եթե դիմումում լրացված բանկային հաշվեհամարը սխալ է.

2) ընտանիքի այն անդամի մասով, ում՝

ա. տվյալները թերի են (չեն ներկայացվել պահանջվող բոլոր տվյալները կամ փաստաթղթերը),

բ. տվյալները հավաստի չեն (ներկայացված տվյալները չեն համապատասխանում բնակչության պետական ռեգիստրում առկա անձը հաստատող փաստաթղթի տվյալներին, կամ ընտանիքի անդամը ներառված չէ Հայաստանի Հանրապետության Լոռու կամ Տավուշի մարզպետի աշխատակազմից ստացված ցուցակում),

գ. մահվան պետական գրանցման վերաբերյալ տվյալներն առկա են քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններից ստացված տվյալներում,

դ. համար առկա է հաստատված դիմում՝ բացառությամբ այն դեպքի, երբ զոհված անձի ընտանիքի անդամը հանդիսանում է նաև բնակության համար նախատեսված անշարժ գույքը վնասված ընտանիքի անդամ:

7. Եթե դիմումը չի մերժվում, ապա ծառայությունը հաստատում և հաշվարկում է ընտանիքի աջակցության չափը՝ համաձայն սույն որոշման N 1 հավելվածի 2-րդ կետի՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու և Տավուշի մարզպետների աշխատակազմերից ստացված տվյալները:

8. Դիմումը հաստատելու կամ մերժելու մասին որոշումը ծառայությունը կայացնում է դիմումն ստանալուց հետո առավելագույնը 30 օրերի ընթացքում,

որի մասին դիմումով ներկայացված բջջային հեռախոսահամարին ուղարկվում է էլեկտրոնային հաղորդագրություն: Ընդ որում, դիմումը հաստատելու դեպքում նշվում է նաև հաշվարկված դրամական օգնության չափը:

9. Աջակցությունը վճարվում է անկանխիկ եղանակով՝ դրամական օգնության գումարը՝ աջակցության տրամադրումը հաստատելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում ընտանիքի անդամի բանկային հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

10. Վճարման ցուցակում ներառվում են՝

1) բանկի անվանումը.

2) ընտանիքի անդամի անունը, ազգանունը, ծննդյան օրը, ամիսը, տարին, անձը հաստատող փաստաթղթի սերիան ու համարը, հանրային ծառայությունների համարանիշը (հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը).

3) բանկային հաշվի համարը.

4) վճարման ենթակա գումարը:

11. Ծառայությունն աջակցության վճարումներն իրականացնում է մինչև 2024 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ, որից հետո վճարման ցուցակներ չեն ձևավորվում:

12. Աջակցությունը բանկի կողմից վճարվում է աջակցության գումարը բանկային հաշվին փոխանցելու միջոցով: Ընդ որում, եթե աջակցության գումարը բանկին փոխանցելու ամսվան հաջորդող 5 ամսվա ընթացքում բանկին չի ներկայացվում գումարն ստանալու պահանջ, ապա գումարը բանկի կողմից վերադարձվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

13. Աջակցության գումարը չի կարող արգելադրվել (դրվել արգելանքի տակ), բռնագանձվել կամ հաշվանցվել հաճախորդի պարտավորությունների դիմաց:

Ձև N 2

Միասնական սոցիալական ծառայության պետ

Պարոն Է. Պետրոսյանին

----- հասցեի բնակիչ

----- -ից

Հեռ.՝ -----

Դիմում

Հայտնում եմ, որ իմ ընտանիքը հանդիսանում է ՀՀ Լոռու և Տավուշի մարզերում 2024 թվականի մայիսի 25-26-ը տեղացած հորդառատ անձրևներով պայմանավորված հեղեղումների պատճառով տուժած ընտանիքներին սոցիալական աջակցության միջոցառման շահառու և խնդրում եմ միջոցառման շրջանակներում նախատեսված սոցիալական աջակցության գումարը փոխանցել

----- -ի ----- բանկի

ընտանիքի չափահաս անդամի անունը, ազգանունը

----- հաշվեհամարին:

Միաժամանակ, տալիս ենք մեր համաձայնությունը, որ աջակցության գումարը միջոցառմամբ սահմանված այլ ֆինանսական միջոցների հաշվին վճարելու դեպքում դիմումով ներկայացրած տվյալները տրամադրվեն ֆինանսավորողին:

Ընտանիքի կազմը՝

№ ը/կ	Անունը, ազգանունը, հայրանունը	Ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը	Անձը հաստատող փաստաթղթի սերիան և համարը	ՀԾՀ կամ ՀԾՀ չստանալու մասին տեղեկանքի համարը	Համաձայն եմ դիմումում ներառված տվյալների և դրույթների հետ (ընտանիքի չափահաս անդամի ստորագրությունը)
1.					
2.					
3.					
4.					
5.					
6.					
7.					
8.					
9.					
10.					

--	--	--	--	--

Գիմող՝

_____ (ստորագրությունը)

_____ (անունը, ազգանունը)

----- 2024 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ